ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2018-2020թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-հունիս)

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %







Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2020թ. հունվար-հունիսին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 95.3%, 2019թ. հունվար-հունիսին 2018թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 106.4%, իսկ 2018թ. հունվար-հունիսին 2017թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 108.7%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար- հունիսին կազմել է 895,952.1 մլն.դրամ, ինչը 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 4,548.1 մլն. դրամով, իսկ 2018 թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 90,926.0 մլն. դրամով:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-հունիսին կազմել է 239,967.3 մլն.դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար՝ 7,983.7 և 29,781.9 մլն. դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-հունիսին կազմել է 105,779.6 մլն.դրամ, ինչը 2019 և 2018 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 25,223.6 և 22,011.3 մլն. դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-հունիսին կազմել է 1,262,458.8 մլն. դրամ, ինչը 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 152,630.3 մլն դրամով, իսկ 2018թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 4,712.7 մլն. դրամով: Ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-հունիսին կազմել է 861,686.7 մլն. դրամ, ինչը 2019թ. համեմատությամբ պակաս է 43,725.4 մլն դրամով, իսկ 2018 թ. նույն ժամանակաշրջնի համեմատությամբ ավել է 83,916.0 մլն. դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2020թ. հունվար-հունիսին 2019թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 101.5%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 106.9%-ի և 103.7%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2020թ. հունվար-հունիսին 2019թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 76.6%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 104.7%-ի և 113.5%-ի պարագայում:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի իրական աճը 2020թ. հունվար-հունիսին 2019թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 101.7%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 վականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 92.6%-ի և 105.5%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Առևտրի շրջանառության իրական աճը 2020թ. հունվար-հունիսին 2019թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 88.9%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 108.9%-ի և 109.1%-ի պարագայում. իսկ ծառայությունների ծավալի իրական աճը 2020թ. հունվար-հունիսին 2019թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 93.6%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 115.3%-ի և 118.1%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-հունիսին կազմել է 181,527.9 մլն.դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 22,337.1 և 23,541.3 մլն. դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-հունիսին կազմել է 578,318.5 մլն. դրամ, ինչը 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 26,789.4 մլն դրամով, իսկ 2018թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամվ ավել է 70,360.7 մլն. դրամով:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-հունիսին կազմել է 126,024.1 մլն. դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 2,596.7 և 693.9 մլն. դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-հունիսին կազմել է 10,081.6 մլն.դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 2,692.5 և 2,282.1 մլն. դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2020թ. հունվար-հունիսին 2019թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 124.3%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 106.8%-ի և 90.2%-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2020թ. հունվար-հունիսին 2019թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 96.4%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 108.7%-ի և 108.6%-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2020թ. հունվար-հունիսին 2019թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 99.5%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 99.7%-ի և 103.3%-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2020թ. հունվար-հունիսին 2019թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 79.1%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 102.7%-ի և 98.4%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ





Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-հունիսին կազմել է 221,710.7 մլն. դրամ, ինչը 2019 և 2018 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 4,207.3 և 58,391.7 մլն. դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-հունիսին կազմել է 135,997.8 մլն.դրամ, ինչը 2019 և 2018 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 11,514.6 և 18,430.4 մլն. դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-հունիսին կազմել է 228,405.5 մլն.դրամ, ինչը 2019 և 2018 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 30,971.3 և 57,017.7 մլն. դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2020թ. հունվար-հունիսին 2019թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 101.6%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 130.1%-ի և 133.0%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2020թ. հունվար-հունիսին 2019թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 107.1%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 104.8% և 107.3%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2020թ. հունվար-հունիսին 2019 թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 111.7%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 115.9%-ի և 118.2%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2020թ. հունվար-մայիսին 2019թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 100.5%, 2019թ. հունվար-հունիսին 2018թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 102.0%, 2018թ. հունվար-հունիսին 2017 թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 102.4%: ՍԳԻ-ն 2020թ. հունիսին 2019թ. դեկտեմբերի նկատմամբ կազմել է 101.0%, 2019թ. հունիսին 2018թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 100.1%, 2018թ.հունիսին 2017 թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 99.4%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2020թ. հունիսի վերջի դրությամբ կազմել է 988,792.0 մլն դրամ, ինչը 241,763.0 մլն. դրամով կամ 32.4%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 444,227.0 մլն. դրամով կամ 81.6%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2020թ. հունիսի դրությամբ կազմել է 87618 մարդ, ինչը 5096 մարդով կամ 6.18%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 4859 մարդով կամ 5.87%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2020թ. հունիսի դրությամբ կազմել է 60487 մարդ, ինչը 3277 մարդով կամ 5.14%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 7972 մարդով կամ 11.64%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)



ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)



Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ



Պետական բյուջեի պակասուրդը/հավելուրդը և դրա ֆինանսավորման աղբյուրները, ընթացիք գներով, մլն դրամ



Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2020թ. հունվար-հունիսին կազմել է 3,134.2 մլն. դոլար, ինչը 376.2 մլն. դոլարով կամ 10.72%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 356.3 մլն. դոլարով կամ 10.21%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2020թ. հունվար-հունիսին կազմել է -916.9 մլն. դոլար, ինչը 221.2 մլն. դոլարով կամ 19.44%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 214.6 մլն. դոլարով կամ 18.97%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2020թ. հունվար-հունիսին կազմել է 1,108.7 մլն դոլար, ինչը 77.5 մլն. դոլարով կամ 6.5%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 70.8 մլն. դոլարով կամ 6.0%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2020թ. հունվար-հունիսին կազմել է 2,025.5 մլն դոլար, ինչը 298.7 մլն. դոլարով կամ 12.9%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 285.4 մլն. դոլարով կամ 12.4%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2020թ. հունվար-հունիսին կազմել է 186410 դրամ, ինչը 9627 դրամով կամ 5.5%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 18043 դրամով կամ 10.7%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2020թ. հունվար-հունիսին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է -48,836.7 մլն. դրամ, ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -8,740.2 մլն. դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ 57,576.9 մլն. դրամ: 2019թ. հունվար-հունիսին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 121,865.3 մլն. դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -77,247.9 և -44,617.4 մլն դրամ: 2018թ. հունվար-հունիսին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է -3,870.0 մլն. դրամ, ընդ որում, ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 28,894.5 և -25,024.5 մլն. դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ